# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1281-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1293-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**- 2024 թվականի N-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1281-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1293-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղի (որի համար նախատեսվում է տեղական վճարի գանձում) գետնանշման ձևը սահմանելու մասին» N 1281-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման վերնագրում «ԳԵՏՆԱՆՇՄԱՆ ՁԵՎԸ» բառերը փոխարինել «ԳԵՏՆԱՆՇՄԱՆ ԳՈՒՅՆԸ ԵՎ ՁԵՎԸ» բառերով.

2) Որոշման 1-ին կետում «գետնանշման ձևը» բառերը փոխարինել «գետնանշման գույնը և  ձևը» բառերով.

3) Որոշման հավելվածի վերնագրում «ՁԵՎ» բառից առաջ լրացնել «ԳՈՒՅՆ ԵՎ» բառերը.

4) Որոշման հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Փողոցի երթևեկելի մասում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղի զբաղեցրած տարածքն առանձնացվում է փողոցի երթևեկելի հարևան գոտուց՝ ավտոկայանատեղի երկայնական սահմանագծի կարմիր, իսկ Երևան քաղաքում՝ կարմիր կամ կապույտ գույնի խզվածքներով գետնանշմամբ, եթե սույն հավելվածով այլ բան նախատեսված չէ: Եթե փողոցի երթևեկելի մասում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղում թույլատրվում է ավտոտրանսպորտային միջոցների՝ միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ կայանում, ապա ավտոկայանատեղի տարածքն առանձնացվում է նաև լայնակի սահմանագծով՝ կարմիր, իսկ Երևան քաղաքում՝ կարմիր կամ կապույտ գույնի հոծ գետնանշմամբ, եթե սույն հավելվածով այլ բան նախատեսված չէ:

2. Հրապարակներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերը սահմանազատվում են կարմիր, իսկ Երևան քաղաքում՝ կարմիր կամ կապույտ գույնի գետնանշմամբ՝ ավտոտրանսպորտային միջոցների մուտքի-ելքի ուղիների կողմից՝ խզվածքներով, ավտոկայանատեղի տարածքի սահմանագիծը հրապարակում՝ հոծ գծով, եթե սույն հավելվածով այլ բան նախատեսված չէ:
3. Ելնելով ավտոկայանատեղի տարածքի առանձնահատկություններից և նպատակահարմարությունից, կարող է իրականացվել վճարովի ավտոկայանատեղի զբաղեցրած ամբողջ տարածքի՝ կարմիր, իսկ Երևան քաղաքում՝ կարմիր կամ կապույտ ներկանյութով, այդ թվում՝ կարմիր, իսկ Երևան քաղաքում կարմիր կամ կապույտ գույնի ասֆալտաբետոնյա կամ այլ ծածկույթներով սահմանազատում, եթե սույն հավելվածով այլ բան նախատեսված չէ:».

5) Որոշման հավելվածի 3-րդ կետից հետո լրացնել նոր 4-րդ, 5-րդ և 6-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Երևան քաղաքում սույն հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված վճարովի ավտոկայանատեղերի զբաղեցրած տարածքի՝ կարմիր կամ կապույտ գույնի գետնանշմամբ սահմանազատումն իրականացվում է ըստ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված գոտիավորման՝ համապատասխանաբար Երևան քաղաքի «Ա» գոտում գտնվող վճարովի ավտոկայանատեղերի համար կարմիր, իսկ «Բ» գոտում գտնվող վճարովի ավտոկայանատեղերի համար՝ կապույտ գույնի գետնանշմամբ:

5. Երևան քաղաքում կազմակերպված ծառայողական

ավտոկայանատեղերի զբաղեցրած տարածքը սույն հավելվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան առանձնացվում է սպիտակ գույնի գետնանշմամբ: Ելնելով Երևան քաղաքում կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի զբաղեցրած տարածքի առանձնահատկություններից և նպատակահարմարությունից, կարող է իրականացվել ծառայողական ավտոկայանատեղի զբաղեցրած ամբողջ տարածքի՝ սպիտակ ներկանյութով, այդ թվում՝ սպիտակ գույնի ասֆալտաբետոնյա կամ այլ ծածկույթներով սահմանազատում:

6. Երևան քաղաքում էլեկտրամոբիլների լիցքավորման կայաններից էլեկտրամոբիլների լիցքավորման ապահովման հնարավորությամբ կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերի զբաղեցրած տարածքը սույն հավելվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան առանձնացվում է կանաչ գույնի գետնանշմամբ:»:
7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 1293-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում «ձևի գետնանշում» բառերը փոխարինել «գույնի և ձևի գետնանշում» բառերով:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մայիսի 1-ից: Երևան քաղաքում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերի զբաղեցրած տարածքների սույն որոշումից բխող գետնանշման ձևի և գույնի փոփոխություններն իրականացվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում: Մինչև սույն որոշումից բխող փոփոխությունների ամբողջական կատարումը, այդ թվում՝ փոփոխությունների կատարման ամբողջ ժամանակահատվածում, Երևան քաղաքում կազմակերպված այն վճարովի ավտոկայանատեղերում, որտեղ ավտոկայանատեղերի զբաղեցրած տարածքի սահմանազատման գետնանշման ձևը և գույնը շարունակում են համապատասխանել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1281-Ն որոշման պահանջներին՝ Երևան քաղաքում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերի զբաղեցրած տարածքների սահմանազատման գետնանշման գույնի և ձևի համար շարունակում են գործել մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը գործող կարգավորումները և դրանք համարվում են կահավորված՝ սահմանված գետնանշման ձևին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն. Փաշինյան